ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՅԲ-01

«23» հունվար 2017թ.

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումը՝ այսուհետ «Պատվիրատու» ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Հովհաննիսյանի և «Արցախփոստ» ՓԲԸ, այսուհետ «Կատարող», ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացնել Պատվիրատուի կողմից ուղարկված փոստային առաքանու առաքման ծառայություններ (այսուհետև՝Ծառայություն),իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու կատարողի գործունեությանը:

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին և /կամ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և պայմանագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 6 և 2.1.4 կետերով նախատեսված դեպքերի:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ Պատվիրատուի կողմից փոստային առաքանին ստանալուց հետո 15 օրվա ընթացքում առաքել հասցեատիրոջը կամ ներկայացնել առաքման ուշացման հիմնավորումը:

2.4.2 Մատուցած Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերվելու դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պատվիրատուն Ծառայության մատուցման պահանջ առաջանալու դեպքում Կատարողին է ներակայացնում իր կողմից ստորագրված փոստային առաքանու առաքման ռեեստրի երկու օրինակ /Հավելված N1/, իսկ Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված ռեեստրի մեկ օրինակը:

3.2 Ծառայությունը մատուցված է համարվում ռեեստրը երկկողմանի ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով կատարողի մատուցած ծառայության գինը կազմում է 1300000 / մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը որոշվում է ԼՂՀ կառավարության կողմից սահմանված փոստային առաքանու տեղափոխման սակագների հիման վրա:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ: Դրամական միջոցների վճարումը կատարվում է 3.1 կետով նախատեղված փաստաթղթի երկկողմանի ստորագրված օրինակը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 10 բանկային օրվա ընթացքում:

4.3 Պատվիրատուն ցանկության դեպքում կարող է նաև Կատարողին նաև որոշակի գումար վճարել որպես կանխավճար:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից առաքման հասցեն կամ հասցեատիրոջ տվյալները սխալ ներկայացնելու դեպքերի համար և նման դեպքում ծառայությունը համարվում է մատուցած:

5.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պրտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի 1 հավելվածը՝ բաղկացած 1 թերթից, հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Ք. Կապան, Մ.Ստեփանյան 3/2 ՀՎՀՀ 02583[illegible] Հ/Հ 900311[illegible] Կենտրոնական գանձարան .....[illegible]	ԿԱՏԱՐՈՂ «Արցախփոստ» ՓԲԸ Ք. Ստեփանակերտ Հ. Մանուկյանի 30 ՀՎՀՀ 900[illegible]33 Հ/Հ 22300100[illegible] «Արցախբանկ» Ա.Գրիգորյան